ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«07» փետրվարի 2019 թվականի № 32-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի, 54-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով հանքավայրի շահագործման նախագծի 2018 թվականի փետրվարի 16-ի ՀՀ բնապահպանության նախարարության՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» թիվ ԲՓ 10 փորձաքննության դրական եզրակացությունը, հաշվի առնելով «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 2017 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ Ֆ-269/17 գրությունը, «ԱՎՇԱՐ ՋՈՒՐ» ՍՊ ընկերության 2017 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 02 գրությունը և Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ԱՎՇԱՐ ՋՈՒՐ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) 50 տարի ժամկետով տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման թիվ ՇԱԹ-29/579 թույլտվությունը՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի «Արարատ» ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 11 և թիվ 12 հորատանցքերից արդյունաբերական (շշալցում) նպատակով 3,74 լ/վրկ, այդ թվում՝ թիվ 11 հորատանցքից 3,15 լ/վրկ, թիվ 12 հորատանցքից 0,59 լ/վրկ, ածխաթթվային հանքային ջրի արդյունահանման աշխատանքներ կատարելու համար:

2. Հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել 117,9 հազ.մ^3, այդ թվում՝ հորատանցք թիվ 11՝ 99,3 հազ. մ^3, հորատանցք թիվ 12՝ 18,6 հազ. մ^3, ածխաթթվային հանքային ջրի պաշար:

3.Կնքել ընդերքի տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ -579 պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր):

4. Ընդերքի գործակալության պետին՝

1) ծանուցել ընկերությանը՝ ոչ ուշ քան 5 աշխատանքային օրվա ընթացքում վճարել ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքը.

2) հրավիրել ընկերությանը 10-օրյա ժամկետում վավերացնելու (ստորագրելու և կնքելու) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի «Արարատ» ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման ընդերքօգտագործման թիվ Պ-579 պայմանագիրը.

3) ընկերության կողմից պայմանագիրը վավերացվելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո, 10 օրվա ընթացքում ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը.

4) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագիրն իր կողմից չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, արդյունահանման իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած.

5) ապահովել համապատասխան գրառումների կատարումը օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

5.«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

6.Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

7.Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Վարդան Գևորգյանին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

2/7/2019

VERIFIED OCSP 07-Feb-19 14:24:35 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118